

**ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՎԱՐՔԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ
ԻՏԱԼԱԿԱՆ ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՓՈՐԱԳՐԱՆԿԱՐ**

ՇՈՂԱԿԱԹ ԴԵՎՐԻԿՅԱՆ*

Հղման համար. Դերիկյան, Շողակաթ: «Գրիգոր Լուսավորչի կյանքը ներկայացնող իտալական մի նորահայտ փորագրանկար»: *Արվեստագիտական հանդես*, N 1 (2023): 254-265. DOI:10.54503/2579-2830-2023.1(9)-254

17-րդ դարի սկզբին Հռոմում տպվել է Գրիգոր Լուսավորչի կյանքը և չարչարանքները ներկայացնող մեծադիր մի փորագրանկար, որը սակայն, առ այսօր հայտնի չի եղել հայ ուսումնասիրողներին: Սբ. Գրիգորի չարչարանքները եզերում են փորագրանկարի կենտրոնի դրվագը, որը ներկայացնում է Լուսավորչի և Տրդատ Գ թագավորի հանդիպումը Սեդեստրոս պապի և Կոստանդիանոս կայսեր հետ՝ ըստ «Դաշանց թուղթ» ոչ վավերական գրության:

Հոգվածում փորձ է արվել պարզել և հիմնավորել այդ նորահայտ պատկերի հեղինակի ինքնությունը, ստեղծման վայրը, տարեթիվը և նպատակը, ինչպես նաև կատարել պատկերագրական և արվեստաբանական վերլուծություն:

Հոգվածում, հիմնվելով փորագրանկարի լատիներեն ու հայերեն մակագրությունների և տվյալ դարաշրջանին վերաբերող պատմական և արվեստաբանական աշխատությունների վրա, նկարագրվում, պարզվում և վերլուծվում են Սբ. Գրիգորի վարքին նվիրված իտալական փորագրանկարի մանրամասները:

Բանալի բառեր՝ փորագրանկար, Լուկաս Չամբերլանուս, «Դաշանց թուղթ», Հռոմ, Սեդեստրոս Առաջին պապ, Նեապոլի Գրիգոր Լուսավորչի մենաստան:

Ներածություն

Գրիգոր Լուսավորչին նվիրված մեր թեկնածուական աշխատանքի նյութերի հավաքման նպատակով երբ այցելել էինք Վենետիկի Սուրբ Ղազար կղզի, արվեստի բազում գործերի շարքում մեր ուշադրությունը գրավեց մի փորագրանկար: Ի տարբերություն Գրիգոր Լուսավորչին վերաբերող այլ փորագրանկարների և գեղանկարների, որոնք ցուցադրված են թանգարանում և միաբանության այլ սրահներում, երկու մեծադիր մեկէջյա փորագրանկար գտնվում էին պահոցում: Դրանք մեզ ցուցադրեց Մխիթարյան վարդապետ Հայր Համազասպ Քեշիշյանը¹: Առաջինը² բազմիցս տպագրվել էր հայ ուսումնասիրողների կողմից ուստիև մեզ քաջ հայտնի էր, մինչդեռ մյուսից անտեղյակ էինք: Գեղարվեստա-

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի ասպիրանտ, կրտսեր գիտաշխատող, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, devrikyan@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 20.04.2023, գրախոսելու օրը՝ 10.05.2023, տպագրության ընդունելու օրը՝ 01.06.2023.

¹ Այս առիթով Համազասպ Վարդապետ Քեշիշյանին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

² Փորագրանկարի տվյալները տե՛ս [6, էջ 788]:

կան և պատկերագրական առումով այն տարբերվում էր Սբ. Գրիգորի վարքը ներկայացնող այլ մեկէջյա պատկերներից:

Նկարի մասին տեղեկություն փնտրեցինք նախ և առաջ «Հայ գիրքը 1512-1800 թվականներին» մատենագրքում, սակայն այնտեղ պատկերին վերաբերող որևէ նկարագրություն չկար: Որևէ տեղեկություն չգտանք նաև հայերեն և այլալեզու գրքերում և հոդվածներում:

Այդ էր պատճառը, որ նախաձեռնեցինք հիշյալ փորագրանկարի մանրամասն ուսումնասիրությունը:

Փորագրիչի, տպարանի և նպատակի հարցի շուրջ

Փորագրող վարպետը նկարի աջ անկյունում թողել է իր ստորագրությունը՝ «Lucas Ciamberlanus I.V. Doc. Scalpsit», հետևաբար հայտնի է պատկերի հեղինակի անունը: Նա բարոկկոյի շրջանի իտալացի նշանավոր փորագրանկարիչ և գեղանկարիչ Լուկաս Չամբերլանուսն է (Lucas Ciamberlanus կամ Luca Ciamberlano):

Չամբերլանուսի ծննդյան ճշգրիտ տարեթիվը չի պահպանվել. նա ծնվել է հավանաբար 1580-ականներին Իտալիայի Ուրբինո քաղաքում: Առաջին հայտնի աշխատանքը 1599 թվականից է: Այդ ժամանակից ի վեր նա հիմնականում ապրել և աշխատել է Հռոմում, մահացել է 1641 թվականին [14, էջ 274]: Հետևաբար, մեր դիտարկվող փորագրանկարը պետք է ստեղծված լինի մինչ այդ տարեթիվը, սակայն հստակ, թե որ թվականին, պատկերի վրա նշված չէ: Լուկաս Չամբերլանուսն իր ստեղծագործական կյանքի առաջին տասնամյակում հիմնականում զբաղվել է իտալացի նշանավոր վարպետներ Ռաֆայել Սանտիի, Ֆեդերիկո Բարոչչիի, Անիբալե Կարաչիի, ինչպես նաև իր վրձնած գեղանկարների փորագրանկար ընդօրինակություններ կատարելով [11, էջ 70]: Հայտնի է նաև, որ մինչև 1620 թվականը աշխատել է մարդու անատոմիական համաչափությունները ճշգրիտ փոխանցելու հմտություն ձեռք բերելու վրա [12, էջ 7]: Այդ հմտություններին տիրապետելը լավագույնս արտահայտվել է նաև մեր դիտարկվող պատկերում:

Մեզ հայտնի է Լուսավորչի չարչարանքները պատկերող մեկէջյա առանձին հինգ փորագրանկար (գրքերում տեղ գտածները զատ), սակայն բոլորն ստեղծված են 18-րդ դարում (միայն մեկը՝ 1692-ին): Հետևաբար այն հանգամանքը, որ ուսումնասիրվող փորագրանկարը տպվել է 17-րդ դարի առաջին կեսին, բարձրացնում նրա նշանակալիությունը:

Հաջորդ կարևոր հարցն է՝ ո՞րն է եղել այս պատկերը տպելու նպատակը:

Փորագրանկարի կենտրոնում՝ մակագրության առաջին երկու տողերում, հիշատակվում է Նեապոլի արքեպիսկոպոս, կարդինալ Ասկանիո Ֆիլոմարինոն. «Eminetissimo Principi Ascanio Filomarino S.R.E Cardinali Ampliss, et Archiepiscopo Neapolitano. D. Lucretia Pignatella, D. Siluia dlla Marra, D. Isabella Milana in S. Gregorii cenobio moniales obseruatie sue monument, et specimen [Ամենից նշանավոր իշխան Ասկանիո Ֆիլոմարինոյին, Սուրբ Հռոմեական եկեղեցու մեծանուն կարդինալին և Նեապոլի արքեպիսկոպոսին:



Լուկաս Չամբերլանուս (1580-1641), Հռոմ, 1641 թ.

Սուրբ Գրիգոր մենաստանի միանձնուհիներ Լուկրեցիա Պինյատելան, Սիլվիա դելլա Մարրան և Իզաբելլա Միլանան ներկայացնում են այս ստեղծագործությունը և իրենց նվիրվածությունը]: Արձանագրության մնացած մասում միանձնուհիներն իրենց խոնարհումն են հայտնում կարդինալին և փառաբանում են Լուսավորչին՝ նրան անվանելով «Հայաստանի անպարտելի առաջնորդ, հանուն հավատի չարչարանքներին խիզախորեն դիմացած կենդանի նահատակ»:

Ասկանիո Ֆիլոմարինոն ծնունդով Նեապոլից էր, սակայն տեղափոխվել է Հռոմ, որտեղ որոշ ժամանակ եղել է Ուրբանոս 8-րդ պապի երիտասարդ զար-

միկի ուսուցիչը [13, էջ 303-304]: 1641 թվականին նա միաժամանակ կարդինալ և Նեապոլի արքեպիսկոպոս է ձեռնադրվում: «Հավատի քարոզչության» մյուս քարոզիչների հետ նա էլ է ձեռնամուխ լինում հռոմեական դավանանքը ոչ կաթոլիկ ժողովուրդների, այդ թվում նաև հայերի շրջանում տարածելուն [13, էջ 303-304]:

«Հավատի քարոզչություն» էր կոչվում Գրիգոր 15-րդ պապի 1622 թ. կազմակերպված Ժողովը, որի նպատակն էր կաթոլիկական դավանանքը սերմանել Արևելքի երկրներում, բոլոր ոչ կաթոլիկ ազգերի մեջ, ներառյալ արևելյան քրիստոնյաներին, որոնք գրեթե բողոքականներին հավասար հերձվածող էին համարվում [5, էջ 327]:

Մի քանի տարի անց՝ 1627 թվականին, Ուրբանոս 8-րդ պապը Հռոմում հիմնեց հատուկ տպարան (Ուրբանյան), որտեղ 17-րդ դ. ընթացքում տպագրվեց շուրջ 30 անուն հայերեն գիրք՝ հիմնականում դավանաբանական բնույթի, ինչպես նաև՝ բառարաններ ու հայոց լեզվի ձեռնարկներ՝ նպատակ ունենալով այլազգի քարոզիչներին հայոց լեզու ուսուցանել [7, էջ 463]: Տպարանի համար փորագրանկարներ է պատրաստել նաև մեր դիտարկվող պատկերի հեղինակ Լուկաս Չամբերլանուսը:

Արձանագրության մեջ հիշատակվող Սբ. Գրիգորի մենաստանի առնչությամբ նշենք, որ, ըստ ավանդության, Լուսավորչի՝ Կոստանդնուպոլսում պահվող նշխարները 8-րդ դարի վերջում՝ պատկերամարտության շրջանում, տեղի վանքերից մեկի միաբանության կույսերը իտալական նավահանգստային Նեապոլ քաղաք են բերել, որտեղ հիմնել են մի նոր կուսանոց [2, էջ 106]: Այդ մենաստանին կից 16-րդ դարի վերջում կառուցվել է բարոկկոյի ոճով մի շքեղ կաթոլիկ եկեղեցի, որը կանգուն է և գործում է առայսօր³: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ դիտարկվող մեկեջյա շքեղ պատկերը մենաստանի միանձնուհիների նվերն է եղել Նեապոլի նորընտիր կարդինալ արքեպիսկոպոսին:

Քանի որ, ինչպես վերը նշեցինք, Ֆիլոմարինոն արքեպիսկոպոս էր ձեռնադրվել 1641-ին, իսկ նկարի փորագրանկարիչ Լուկաս Չամբերլանուսը մահացել է այդ նույն թվականին, ապա ամենայն հավանականությամբ փորագրանկարը ստեղծվել է հենց 1641-ին:

Փորագրանկարի գեղարվեստական հարդարանքը

Պատկերի հեղինակի ինքնությունը, ստեղծման վայրը, տարեթիվը և նպատակը պարզելուց հետո անդրադառնանք դրա պատկերագրությանը և գեղարվեստական հարդարանքին:

Փորագրանկարը կատարված է բարոկկոյի շքեղ և հանդիսավոր ոճով: Հունահռոմեական տաճարներ հիշեցնող կամարները, սյուները, խոյակներն ու խարիսխները, բուսական ու երկրաչափական զարդերով շրջանակները փառավոր և մոնումենտալ տեսք են հաղորդում դրան:

³ Լուսավորչի նշխարները Նեապոլ տարվելու ավանդության մասին մանրամասն տե՛ս [4, էջ 258-266]:

Պատկերի տարբեր դրվագներն ունեն լատիներեն և հայերեն մակագրություններ, որոնք առանձին շրջանակների մեջ են առնված: Հայերեն տառերը անվարժ և անվստահ ձեռքով են գրված. ըստ երևույթին, փորագրիչը անձանոթ էր լեզվին և պարզապես ընթերցանակել էր իրեն տրված գրությունների տառերը: Բառերում տեղ գտած սխալները և անհարթությունները հուշում են, որ դրանց հեղինակը նույնպես վարժ չի տիրապետել հայերենին:

Կենտրոնում շրջանակի մեջ է վերցված հետևյալ հանդիսավոր գրությունը՝ «VITA, MIRACVLA, ET MARTYRIA SANCTI GREGORII PRIMI ARMENORVM ARCHIEPISCOPI. Վարք և մարտիրոսություն և ըսքանչելիք սբն. Գրիգորի Հայեաստանեաց Լուսաւորչին»: Մյուս մակագրություններում նշված են Հայոց Տրդատ թագավորի, Գրիգոր Լուսավորչի, Կոստանդիանոս կայսեր և Սեղբեստրոս հայրապետի անունները:

Ամենից հետաքրքրականը կենտրոնի դրվագն է, որտեղ պատկերի շրջանակից ներս արված գրությունն ասում է. «Սբ. Գրեգոր Լուսավորիճ դաքաոր Տրդատ Հրոմա ի բեր»: Պատմական այս չորս կերպարների Հռոմում հանդիպման սկզբնաղբյուրը «Դաշանց թուղթ» կոչվող ոչ վավերական գրվածքն է, որը միտված էր խորհրդանշել հայ և կաթոլիկ եկեղեցիների միասնությունը: Աղբյուրում պատմվում է հայոց Տրդատ Գ արքայի և Գրիգոր Լուսավորչի՝ Հռոմ այցելելու և այնտեղ Կոստանդիանոս կայսեր և Սեղբեստրոս պապի կողմից մեծ փառքով ընդունվելու մասին⁴:

Ըստ այդ մտացածին փաստաթղթի Տրդատը, տեղեկանալով Կոստանդիանոսի դարձի մասին, ցանկանում է գնալ նրան այցելության: Գրիգոր հայրապետի հետ, մեծաթիվ զորքի ուղեկցությամբ նա հասնում է Հռոմ, որտեղ Կոստանդիանոս կայսեր կողմից արժանանում է մեծ պատիվների և ջերմ ընդունելության: Լուսավորիչն իր հերթին պատվվում է որպես «կենդանի նահատակ» [2, էջ 42]: Թագավորները և հայրապետները սիրո և ուխտի գիր են ստորագրում⁵:

Այս ավանդությունը ժամանակ առ ժամանակ «վերակենդանացվել» է և՛ հայերի կողմից՝ քաղաքական ծանր պայմաններում Հռոմից օգնություն ստանալու, և՛ պապական աթոռի կողմից՝ Արևելքում իշխանություն տարածելու նպատակով [10, էջ 57]:

Այսպիսով, 17-րդ դարի սկզբում, երբ Հռոմն սկսում է հայերին կաթոլիկացնելու նոր ջանքեր գործադրել, «Դաշանց թուղթը» դարձյալ արդիականություն է ձեռք բերում և՛ Ա. Հովհաննիսյանի դիպուկ բնորոշմամբ, «դառնում է պապական եկեղեցու ունիվերսալ հավակնությունները և հայ-հռոմեական եկեղեցական միությունը հիմնավորող ազիտացիոն միջոցներից մեկը» [8, էջ 74]:

Փորագրանկարի կենտրոնում տեսնում ենք շքեղ հագուստներով պապական գահին բազմած Սեղբեստրոս հայրապետին: Նրանից աջ Կոստանդիանոսն է՝ հռոմեական կայսրերին բնորոշ հագուստով, թիկնոցով ու թագով, իսկ ձախ կողմում Սբ. Գրիգորն է՝ հայրապետական հանդերձանքով: Կոստանդիանոսից օրինություն է ստանում ծնրադիր Տրդատը:

⁴ «Դաշանց թղթի» մասին տե՛ս [16]:

⁵ «Դաշանց թուղթ» ստեղծման դրդապատճառների մասին մանրամասն տե՛ս [3, էջ 65-116]:



Հայոց արքայի թագը և գավազանը ցած են դրված, սակայն պատկերված են անմիջապես Կոստանդիանոս կայսեր ոտքերի մոտ: Ստեղծվում է այնպիսի տպավորություն, ասես նրա առջև են խոնարհված հայոց պետականության խորհրդանիշները: Սա, հավանաբար, միտված էր ևս մեկ անգամ շեշտելու Հռոմի գերակայությունը:

Այս հատվածից ցած գտնվող մեդալիոնը մակագրված է. «Constantinus Imperator S. Pont. Silvestri in Monte Soracte latitante adse duei iubet, et adductum ueneratur [Կոստանդին կայսրը հրամայում է իր մոտ բերել Սեղբեստրոս պապին, ով թաքնվում էր Սորակտե լեռան վրա, և մեծարում է նրան]»: Սա մեկ այլ ավանդություն է, ըստ որի Սբ. Սեղբեստրոսը հեռանում է Սորակտե լեռը, սակայն Կոստանդինոսը՝ քրիստոնյաների հանդեպ դաժան վերաբերմունքի համար ծանր հիվանդանալով, կարգադրում է, որպեսզի սրբին իր մոտ բերեն [15, էջ 69]: Փորագրանկարում տեսնում ենք Սեղբեստրոս հայրապետին և կայսեր սուրհանդակին: Վերջինս ձեռքով ցույց է տալիս հեռվում կանգնած զորքը, որի ուղեկցությամբ նրանք պետք է վերադառնան: Կենտրոնական դրվագի վերևում պատկերված է երկու մասի բաժանված ավելի փոքր մեդալիոն: Առաջին հատվածի մակագրությունը հետևյալն է. «Սբ. Սեղախստրոս պապն Ղոստանտինոս դախտերն մկրտեց»: Իսկ երկրորդինը՝ «Դաքաորն և քիրն և այլ շատ մարթ մկրտեց»:



Վստահաբար կարող ենք ասել, որ փորագրիչը տեսել է Տրդատի մկրտությունը պատկերող որևէ հայկական մանրանկար, քանի որ ընդունված պատկերագրությունը ընդօրինակված է նույնությամբ. Լուսավորիչը մկրտում է ծնկի եկած Տրդատին և Խոսրովիդուխտ արքայաքրոջը, իսկ բացված երկնականարից երևում է աղավնակերպ Աբ. Հոգին և լույսի սյունը:

Չարչարանքների շարքն սկսվում է ստորին ծախ անկյունից: Յուրաքանչյուր դրվագ զուգակցվում է տվյալ չարչարանքը նկարագրող լատիներեն և հայերեն մակագրություններ: Դրանք գրեթե նույնությամբ փոխանցում են Ագաթանգեղոսի հաղորդած մանրամասները Լուսավորչի չարչարանքների մասին: Հայերեն գրվածքներում, սակայն, բազում սխալներ ու անհարթություններ կան:

Առաջին չարչարանքի վերաբերյալ գրված է, որ հաստ փայտով բերանը ձգեցին: Տեսնում ենք երկու ծառաների, որոնք գելարանով սեղմում են ծառին կապված Լուսավորչի բերանը «մինտէնց հաստ, զի էտ բերանտումն դրին, որ բերանն ցվէց»:

Երկրորդ չարչարանքը մակագրված է՝ «Կրներէն կախ յուսէրն աղօլ բարցին և է. (7) օր էնէհէնց թողին»: Պատկերված է սուրբը՝ կախված, մեկ պարկ աղ մեջքին դրված, իսկ ծառաները կռացած մեծ դժվարությամբ ևս երկու պարկ են փորձում բարձրացնել և դնել նրա մեջքին:

Ըստ Ագաթանգեղոսի մեկ չարչարանքն այստեղ ներկայացված է երկու դրվագներում՝ որպես առանձին չարչարանքներ:

Երրորդ՝ «Մին ոտնէն կախ գլխատակին թրիք իրէցին և Ծ. (50) մրթ՝ դականակօլ է. (7) օր թակէցին»: Տեսնում ենք, որ չորս մարմնեղ սպասավորներ փայտեղով հարվածում են մեկ ոտքից կախված Սուրբ Գրիգորին, իսկ նրա գլուխը այրվող աղբի մոխրի և ծխի քուլաների մեջ է:

Չորրորդ՝ «Ոտնէրն Բ. (2) փիտի միջում հէնց հուփ տվին, որ արին կկաթէր»: Նկարում Լուսավորիչը ձեռքերը պարզած աղոթում է առ Աստված, իսկ

ծառաներից մեկը զարմացած նրան է նայում, փորձելով հասկանալ, թե ինչպես է սուրբը դիմանում անմարդկային այդ ցավին:

Հինգերորդ՝ «Ուտներին տակին Բ. (2) սուր մէխ վեր տվին և ուժով ման ածիլ տվին»: Այստեղ, ինչպես դրվագներից մի քանիսում, պատկերվել է Տրդատը, հետևելիս, թե ինչպես երկու ծառա հրում են Լուսավորչին, որպեսզի նա երկաթյա բևեռներ ոտքերի մեջ խրված քայլի:


Վեցերորդ՝ «Գլուխն մին մանգանի տակում ջնջխեցին և քինթն ի վեր աղ ու քացաղ ածեցին»: Գլուխը սեղմելը և քիթը քացախ փչելը Ագաթանգեղոսը ներկայացնում է որպես առանձին երկու չարչարանք: Այստեղ, սակայն, պատկերված է որպես մեկ: Նկարում տեսնում ենք փայտերի արանքում գլուխը անբնականորեն թեքված Լուսավորչին: Քացախ փչելը պատկերված չէ:

Ինչպես արդեն նշել ենք, Չամբերլանուսը հմտացել էր մարդկային մարմինները ճիշտ և համաչափ պատկերելու գործում: Անգամ մեդալիոնների այս փոքր չափսում տեսնում ենք համաչափ, մկանոտ և գեղեցիկ մարմիններ:

Յոթերորդ՝ «Գլուխն մին տիկում մոխիրով լի դրին և է. (7) օր էնէհէնց թողին»: Մոխրից ուռած մեծ պարկ գլխին կապած սրբին ծնկի են բերել թագավորի առջև:

Ութերորդ՝ «Ուտներէն կախ փորն վերի դօլեն ջրով լիցին»: Դրվագը պատկերված է գրությանը համապատասխան:

Քանի որ Վենետիկի Մխիթարյան Միաբանությունում պահվող փորագրանկարը վերևից փոքրինչ պատռված է, ապա **իններորդ** (կողերը երկաթե ճանկերով քերեցին) և **տասներորդ** (երկաթե դաստակների վրա քաշելով քերեցին) չարչարանքները չենք տեսնում, սակայն, ամենայն հավանականությամբ, դրանք նույնպես պետք է պատկերված լինեն մակագրությանը համապատասխան:



Տասնմեկերորդ՝ «Կրնէրէն կախ արկաթէ չաքմայ (երկարաճիտ կոշիկ) հաքցրին և ծնգնէրին վերա մէջ վէր տվին»: Ոտքերին երկաթներ հագցրած Սբ. Գրիգորը կախված է ծառից:

Թերևս ամենից սահմոկեցուցիչ չարչարանքն է **տասներկուերորդը**, ըստ որի՝ «Հալած առճիճ մարմինին վերա ածէցին»: Կրակի բոցերի մեջ դրված է կապարով լի կաթսան և սպասավորը շերեփ առ շերեփ այն լցնում է Լուսավորչի վրա, իսկ ապշած թագավորը ապշահար դիտում է:

Հաջորդ դրվագում արդեն Տրդատի ներկայությամբ սրբի տանջահար մարմինը վիրապն են նետում:

Մյուս մեղալիոնում տարաժամանակյա երեք դեպք է պատկերված: Հեռվում տեսնում ենք Սբ. Հռիփսիմեի նահատակությունը, որին հետևում է թագավորը, մյուս կողմում արդեն մեծաթիվ մարդիկ դուրս են հանում Լուսավորչին Խոր Վիրապից, իսկ առջևի մասում կանգնած է նա խոզակերպ Տրդատի առջև և մատով ցույց է տալիս երկինքը, կարծես ցանկանում է ասել, որ արքային պատուհասած հիվանդությունը Աստծո պատիժն է:

Վերջին երկու մեղալիոններնը պատկերում են Լուսավորչի առանձնանալը Մանյա այրում և մահը: Սուրբ Գրիգորն իր կյանքի վերջին տարիները անցկացրեց առանձնության մեջ՝ ճգնելով Սեպուհ լեռան Մանյա անունով մի քարայրում: Երբ նրա քահանայապետության երեսուն տարին լրացավ «բարի պատերազմը պատերազմած, հավատը պահած, ընթացքը ավարտած և անթառամ պսակին հասած» Տիրոջ հրամանով ելավ Սեպուհ լեռան կատարը և առանձնացավ լուրջության մեջ:

Սուրբ Գրիգորի մահվան մասին Խորենացին գրում է. «Բայց սրբոյն Գրիգորի ի Մանեայ այրն կեցեալ աներևութաբար ամս բազումս՝ փոխի մահուամբ ի կարգս հրեշտակաց: Եւ հովուաց գտեալ զնա վախճանեալ՝ ի նմին տեղոջ թաղեցին, ոչ գիտելով թէ ով ոք նա իցէ» [9, էջ 244]: Ըստ ավանդության, Աստծուց ուղղորդվելով, սրբի մարմինը որոշ ժամանակ անց հովիվներն են գտնում. «Ի կատարման երանելոյն հանգստեան ի լերինն ծածուկ ի մարդկանէ, հրամանաւ Աստուծոյ եղև գտանել զնա հովուաց՝ նստեալ որպէս կենդանի ընդդէմ արևելից, խաչանման ի վեր ունելով զԱջն առաքելական ի վերայ աստուածատիպ պատկերին» [1, էջ 15]: Մեղալիոնի պատկերում բացված երկնականարից երևացող Հայր Աստված հովիվներին մատով ցույց է տալիս դեպի Լուսավորիչը: Եվ վերջին դրվագում կարդում ենք՝ «Էլէն շօբանէրն սուրբ մարմինն թաղեցին»:

Եզրակացություն

Այսպիսով, կատարված ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ դիտարկվող փորագրանկարը նմանատիպ հայտնի պատկերների շարքում ամենավաղն է և որ իր հորինվածքով ու պատկերագրությամբ այն հիմք է հանդիսացել Լուսավորչի չարչարանքները ներկայացնող հետագա մեկէջյա առանձին փորագրանկարների համար:

Այս պատկերը կարևորվում է նաև «Դաշանց թղթի» և եվրոպական միջավայրում միջնադարյան Հայաստանի հեղինակության և ընկալման համատեքստում: Այն հավաստում է, որ Լուսավորիչը՝ որպես համաքրիստոնեական սուրբ,

մեծապես պաշտվել է կաթոլիկ միջավայրում նույնպես: Նշենք նաև, որ «Դաշանց թուղթն» առաջին անգամ հրատարակվել է Վենետիկում 1683 թվականին (Հովհաննես Հոլովի իտալերեն թարգմանությամբ) [3, էջ 65], հետևաբար դիտարկվող փորագրանկարը նշված առասպելի պատկերային լեզվով առաջին հրատարակությունն է:

Կարող ենք ենթադրել նաև, որ այս պատկերը Ֆիլոմարինոյի կողմից օգտագործվել է որպես իր քարոզչական գործունեության «գործիք»: Իմանալով Հայոց հայրապետի պաշտամունքը և համբավը հայոց մեջ, դիմելով նրա կերպարին, կկարողանա ներազդել հայերի թե՛ ազգային և թե՛ հոգևոր զգացումներին ու հույզերի վրա:

Հետագայում, հավանաբար, նոր մանրամասներ ի հայտ կգան այս փորագրանկարի ստեղծման և հարակից այլ հարցերի շուրջ, սակայն ներկայիս հոդվածի նպատակն է այն մտցնել գիտական շրջանառության մեջ և ներկայացնել արվեստաբանական և պատմական համատեքստում:

Գրականություն

1. Ակինյան Ն. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ. Վիեննա, «Մխիթարյան տպարան», 1950:
2. Աշճեան Մ. Արք. Լուսավորչի լույս նշխարները. Ս. Էջմիածին, «Մուղնի», 2000:
3. Բարթիկյան Հ. «Դաշանց թուղթ», կազմը, ստեղծման ժամանակը, հեղինակն ու նպատակը, «Պատմա-բանասիրական հանդես», № 2, Երևան, 2004, էջ 65-116:
4. Դևրիկյան Վ. Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, մասն Գ. Երևան, «Զանգակ», 2016:
5. Իշխանյան Ռ. Հայ գրքի պատմություն, հ. 1, Երևան, «Հայատան», 1977:
6. Հայ գիրքը 1512-1800 թվականներին. կազմողներ՝ Ոսկանյան Ն., Կորկոտյան Բ., Սավալյան Ա. Երևան, 1988:
7. Հայկական Սովետական Հանրագիտարան. Երևան, «Հանրագիտարան» հրատ., 1982:
8. Հովհաննիսյան Ա. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. Ա. Երևան, «Հայկական ՍՍՌ ԳԱ» Հրատ., 1957:
9. Մովսես Խորենացի. Պատմություն հայոց. քնն. բնագիրը և ներածություն՝ Աբեղեան Մ., Յարությանյան Ս. Երևան, «Հայկական ՍՍՌ ԳԱ» Հրատ., 1991:
10. Շիրինյան Է. «Սեդեքետրոսի Վարք»-ը և «Դաշանց Թուղթ»-ը, «Բանբեր Մատենադարանի», № 17. Երևան, 2006, էջ 53-77:
11. «Чьямберлано Лука», Энциклопедический словарь Брокгауза и Ефрона, том 39. Санкт-Петербург, 1903.
12. Blunt A.F., Merz J.M. Pietro da Cortona and Roman Baroque Architecture, Yale University Press, 2008.
13. Moroni G. Dizionario di erudizione storico-ecclesiastica, Vol. 24. Venezia, Tipografia Emiliana, 1840.
14. Nagler G.K., Andresen A., Clauss C. Die Monogrammist. München, 1871.
15. Platina B. The Lives of the Popes from the Time of Our Saviour Jesus Christ to the Accession of Gregory VII, vol. 1, translated into English and ed. by Benham W. London, 1900.
16. Poghosian Z. The Letter of Love and Concord. A Revised Diplomatic Edition with Historical and Textual Comments and English Translation, Leiden-Boston, 2010.

References

1. Akinyan N. Saint Gregory the Illuminator. Vienna, “Mekhitarists” Publ., 1950 (in Arm.)

2. Ashdjian M. Arch. Saint Relics of the Illuminator. S. Etchmiadzin, "Mughni", 2000 (in Arm.).
3. Bartikyan H. "Charter on Friendship and Concord". Composition. Time. Author and Goal of its Creation, "Historical-Philological Journal", № 2. Yerevan, 2004, p. 65-116 (in Arm.).
4. Devrikyan V. The Armenian Book at the Crossroads of the World, Vol. 3. Yerevan, "Zangak", 2016 (in Arm.).
5. Ishkhanyan R. History of the Armenian book, Vol. 1. Yerevan, "Hayastan", 1977 (in Arm.).
6. The Armenian Book in 1512-1800. Compilers: Voskanyan N., Korkotyan K., Savalyan A. Yerevan, 1988 (in Arm.).
7. Armenian Soviet Encyclopedia, Vol. 13. Yerevan, "Encyclopedia publishing house", 1982 (in Arm.).
8. Hovhannisyan A. Episodes from the History of Armenian Liberation Thought, Vol. 1. Yerevan, "Publishing house of the AS of the Armenian SSR", 1957 (in Arm.).
9. Movses Khorenatsi, History of Armenia. examination of the original text and introduction: Abeghian M., Harutyunian S. Yerevan, "Publishing house of the AS of the Armenian SSR", 1991 (in Arm.).
10. Shirinyan E. "Sylvester Vita" and "The Letter of Love and Concord", "Bulletin of Matenadaran", № 17. Yerevan, 2006, p. 53-77 (in Arm.).
11. "Ciamberlano Luca", Encyclopedic dictionary Brokgauza and Efron, Vol. 39. Saint-Petersburg, 1903 (in Rus.).
12. Blunt A. F., Merz J. M. Pietro da Cortona and Roman Baroque Architecture. Yale University Press, 2008 (in Italian).
13. Moroni G. Dizionario di erudizione storico-ecclesiastica, Vol. 24. Venezia, Tipografia Emiliana, 1840 (in Italian).
14. Nagler G.K., Andresen A., Clauss C. Die Monogrammisten. München, 1871 (in German).
15. Platina B. The Lives of the Popes from the Time of Our Saviour Jesus Christ to the Accession of Gregory VII, Vol. 1. translated into English and ed. by Benham W. London, 1900.
16. Poghossian Z. The Letter of Love and Concord. A Revised Diplomatic Edition with Historical and Textual Comments and English Translation. Leiden-Boston, 2010.

НОВАЯВЛЕННАЯ ИТАЛЬЯНСКАЯ ГРАВЮРА, ИЗОБРАЖАЮЩАЯ ЖИЗНЬ ГРИГОРИЯ ПРОСВЕТИТЕЛЯ

ШОГАКАТ ДЕВРИКЯН*

Для цитирования: Деврикян, Шогакат. "Новоявленная итальянская гравюра, изображающая жизнь Григория Просветителя". *Искусствоведческий журнал*, N 2 (2023): 254-265. DOI:10.54503/2579-2830-2023.1(9)-254

В начале XVII века в Риме была напечатана большеформатная гравюра, изображающая жизнь и страсти Григория Просветителя. Она до последнего

* Аспирант, младший научный сотрудник отдела изобразительного искусства Института искусств НАН РА, devrikyan@gmail.com; младший научный сотрудник Института древних рукописей Матенадаран имени Месропа Маштоца, статья представлена 20.04.2023, рецензирована 10.05.2023, принята к публикации 01.06.2023.

времени оставалась неизвестной армянским исследователям. На гравюре изображены различные эпизоды жизни и мученичества Святого Григория, однако центральное место отведено встрече Просветителя и царя Тиридата III с Папой Сильвестром и императором Константином, как описано в недостоверном писании «Грамота о дружбе и согласии».

Целью данной статьи является установление личности автора новоявленной гравюры, места, времени и цели ее создания, а также проведение иконографического и искусствоведческого анализа картины.

На основании латинских и армянских надписей на гравюре, используя исторические и искусствоведческие труды, касающиеся данной эпохи, в статье выявлены, описаны и проанализированы художественные особенности произведения.

Ключевые слова: гравюра, Лука Чьямберлано, «Грамота о дружбе и согласии», Рим, Папа Сильвестр I, монастырь Григория Просветителя в Неаполе.

A NEWLY DISCOVERED ENGRAVING DEPICTING THE LIFE OF GREGORY THE ILLUMINATOR

SHOGHAKAT DEVRIKYAN*

For citation: Devrikyan, Shoghakat. "A newly discovered engraving depicting the life of Gregory the Illuminator", *Journal of Art Studies*, N 1 (2023): 254-265. DOI:10.54503/2579-2830-2023.1(9)-254

In the early XVII century, a large-scale engraving portraying the life and passion of Gregory the Illuminator was printed in Rome. The engraving was unknown to Armenian researchers until recently. Surrounded with depictions of various episodes of St. Gregory's passion and life, in the center of the artwork is the meeting of the Illuminator and King Tiridates III with Pope Sylvester and Emperor Constantine, as described in the untrustworthy work "Letter of Love and Concord".

The primary objective of this article is to uncover and substantiate the identity of the author of the newly discovered engraving, the place, date and purpose of creation, as well as to conduct an iconographic and artistic analysis.

Delving into the Latin and Armenian inscriptions on the engraving, historical and art criticism works from the same period, the research provides a comprehensive understanding of this Italian engraving dedicated to the life and passion of St. Gregory.

Key words: Engraving, Lucas Ciamberlanus, "Letter of Love and Concord", Rome, Pope Sylvester I, Monastery of Gregory the Illuminator in Naples.

* NAS RA Institute of Arts, PhD student, junior researcher at the Department of Fine Arts; Matenadaran. Mesrop Mashtots Research Institute of Ancient Manuscripts, junior researcher, devrikyan@gmail.com. The article was submitted on 20.04.2023, reviewed on 10.05.2023, accepted for publication on 01.06.2023.